

## Կազմակերպված հանցավորության դեմ պայքար Արևելյան գործընկերության տարածաշրջանում

Իրականացման 01.07.2020 - 30.06.2024  
ժամանակահատված:

### Այլ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա,  
Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 2 500 000

Ընդհանուր € 2 500 000  
բյուջե:

### Իրականացնող կազմակերպություն(ներ):

European Law Enforcement Agency (EUROPOL)



Սոցիալական ցանցերում օգտահաշիվների  
հղումներ:

Նախագծի europol.europa.eu/activities-services/e  
կայքէջ: astern-partnership-project-eap

### Նախագծի նկարագրություն

«Կազմակերպված հանցավորության դեմ պայքար Արևելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի հիմնական նպատակն իրավապահ մարմինների գործառնական համագործակցության բարելավումն է Արևելյան հարևանության տարածաշրջանի ներսում և ԵՄ անդամ պետությունների ու ԵՄ ոլորտային գործակալությունների հետ: Ծրագիրը նպատակ ունի ավելացնել գործընկեր երկրների ներգրավվածությունը EMPACT-ի (Եվրոպական բազմամասնագիտական հարթակ՝ ընդդեմ հանցավոր սպառնալիքների) ներքո իրականացվող համատեղ գործողություններում և միջոցառումներում: Արևելյան գործընկերության տարածաշրջանի հետ գործառնական համագործակցության հետագա զարգացման խթանումը լրացուցիչ արժեք է ԵՄ քաղաքականության ցիկլի գործառնական իրականացման համար և բարձրացնում է քաղաքացիների անվտանգությունը ինչպես ԵՄ-ում, այնպես էլ Նրա գործընկեր երկրներում: ԵՄ քաղաքականության ցիկլին համապատասխանեցումը փորձի փոխանակման և անհրաժեշտ համակարգման հնարավորություն կտա հանցավորության բոլոր համապատասխան ոլորտներում:

### Ակնկալվող արդյունքներ:

- EMPACT-ի առաջնահերթ ոլորտներում հանցավորության դեմ պայքարի ամրապնդում և EMPACT-ի շրջանակներում համագործակցության ընդլայնում.
- Արևելյան հարևանության տարածաշրջանի երկրներում հետախուզական տվյալների փոխանակման կարողությունների ընդլայնում.
- ԵՄ անդամ պետությունների և գործակալությունների հետ ընդլայնված գործառնական համագործակցություն, այդ թվում՝ EMPACT-ի միջոցով: